ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----------ի 2026 թվականի №---Ա

«ԷՆԵՐԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №517-Ն որոշմամբ հաստատված՝ մինչև 2026 թվականի օգոստոսի 1-ը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) 37-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մատակարարն օրենքի, լիցենզիայի, ԷՄԱ կանոնների համաձայն՝ պետք է ունենա սպասարկման գրասենյակ, պաշտոնական կայք, որոնց միջոցով սպառողին տրամադրում է տեղեկություն և պարզաբանում՝ մատակարարման պայմանագրի կնքման ընթացակարգի և անհրաժեշտ փաստաթղթերի, մատակարարվող էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների և դրանց խախտման հետևանքների, սպառողների կողմից բողոքների և դիմումների ներկայացման և մատակարարի կողմից դրանց պատասխանելու կարգի և իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված այլ հարցերի վերաբերյալ,

2) ԷՄԱ կանոնների 57-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը պարունակում է առնվազն՝ մատակարարվող էլեկտրական էներգիայի գինը կամ վճարը, վճարումների կարգը և խախտման հետևանքները, պայմանագրի գործողության ժամկետը, պայմանագրի լուծման կարգը և հետևանքները, այդ թվում՝ երաշխավորված մատակարարի կողմից սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորումը,

3) ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը լուծվում է սպառողի նախաձեռնությամբ՝ լուծումից առնվազն 6 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին, իսկ մատակարարման խմբի մասնակից լինելու դեպքում՝ լուծումից առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին և մատակարարման խմբի մյուս մասնակիցներին, և մատակարարի նախաձեռնությամբ՝ մատակարարման պայմանագրով կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ այդ մասին առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով սպառողին,

4) Հանձնաժողովը 2026 թվականի մարտի 16-ից մինչև 2026 թվականի ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ԷՄԱ կանոններով մատակարարներին ներկայացված հիշյալ պահանջներին մատակարարների համապատասխանության ուսումնասիրություն, որի շրջանակում Հանձնաժողովի 2026 թվականի մարտի 16-ի №ՄՄ/34.3-Ղ4-4/1449-2026 գրությամբ «ԷՆԵՐԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Ընկերություն) պահանջվել է 5-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության սպասարկման գրասենյակի հասցեի վերաբերյալ տեղեկատվություն և գրասենյակի լուսանկարները, որոնք հնարավորություն կտան ամբողջական պատկերացում կազմել գրասենյակի և գրասենյակում առկա տեղեկատվության վերաբերյալ, Ընկերության պաշտոնական կայքի հասցեն, ինչպես նաև սպառողների հետ կնքվող մատակարարման պայմանագրի ձևը, իսկ մեկից ավելի պայմանագրերի տեսակ կիրառելու դեպքում՝ ձևերը,

5) Ընկերությունը 2026 թվականի մարտի 17-ի №01-03/17 գրությամբ ներկայացնելով պահանջվող տեղեկատվությունը և գրասենյակի լուսանկարները, նշել է նաև, որ Ընկերության սպասարկման գրասենյակը գտնվում է Երևան քաղաքի Մովսես Խորենացի №28 հասցեում, Ընկերության պաշտոնական կայքն է www.enerex.am, որտեղ արտացոլված են Ընկերության գործունեության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, մատակարարման պայմանագիր կնքելու անհրաժեշտ փաստաթղթերը, սպառողի և արտադրողի տիպային պայմանագրերի ձևերը, տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվությունները: Ընկերությունը ներկայացրել է նաև էլեկտրական էներգիայի վաճառքի պայմանագրի տիպային ձևը, ինչպես նաև սպառողի հետ կնքվող էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի տիպային օրինակը, որը պարունակում է մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի հաշվարկը, վճարման կարգը, գործողության ժամկետը,

էլեկտրական էներգիայի դիմաց վճարումներ կատարելու կարգը, իսկ սահմանված ժամկետների խախտման դեպքում՝ հետևանքը, պայմանագրի լուծման հիմքերը: Ընկերությունը նշել է նաև, որ ի թիվս այլ հիմքերի՝ պայմանագիրը կարող է լուծվել սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին մեկ ամիս առաջ տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով, ինչպես նաև մատակարարի կողմից միակողմանի՝ այդ մասին սպառողին մեկ ամիս առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագիրը պարունակում է դրույթ երաշխավորված մատակարարի կողմից սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորման վերաբերյալ,

6) Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 13-ի №ՄՄ/34.3-Ղ4-4/1972-2026 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ ներկայացված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի տիպային ձևում սպառողի և մատակարարի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման ժամկետները չեն համապատասխանում ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետներին և Ընկերությունից պահանջել է նշվածի վերաբերյալ պարզաբանում ներկայացնել Հանձնաժողով,

7) Ընկերությունը 2026 թվականի ապրիլի 17-ի №01-04/17 գրությամբ հայտնել է, որ նախորդ տարվա ընթացքում իր հաշվեկշռման խմբում գտնվող սպառողներից մեկը մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց ձևավորել է պարտավորություն, և պայմանագրի լուծումից հետո այդ գումարը չի վճարել, և Ընկերությունը կրել է էական ֆինանսական վնաս: Նմանատիպ խնդիրներից հնարավորինս զերծ մնալու և Ընկերության ռիսկերը կառավարելի դարձնելու նպատակով էլ ընտրվել է մատակարարման պայմանագրերի լուծման դրույթների հիշյալ խմբագրությունը: Նշվածով պայմանավորված Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մարտի 16-ից ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա վերանայել գործող կարգավորումները՝ ինչպես սպառողի, այնպես էլ մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի լուծման ժամկետները սահմանելով մյուս կողմին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելու պայմանով,

8) 2026 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողովում հրավիրվել է աշխատանքային քննարկում մատակարար ընկերությունների մասնակցությամբ՝ ուսումնասիրության

ընթացքում հայտնաբերված փաստերի շուրջ վերջիններիս մոտ առկա տարընկալումների քննարկման նպատակով: Քննարկման արդյունքում Ընկերությունը հանձն է առել սեղմ ժամկետում սպառողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը վերակնքել՝ համապատասխանեցնելով ԷՄԱ կանոններին,

9) Արդյունքում Ընկերությունը, ի լրումն իր 2026 թվականի ապրիլի 17-ի №01-04/17 գրության՝ 2026 թվականի հունիսի 3-ի №01-06/03 գրությամբ ներկայացրել է իր մատակարարման խմբի սպառողներից մեկի հետ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի լուծման ընթացքի վերաբերյալ ժամանակագրական տեղեկատվություն, նշելով, որ սպառողի նախաձեռնությամբ պայմանագիրը միակողմանի լուծելու, իրենց իրավունքների պաշտպանությունը և շահերի հավասարակշռումը ապահովելու նպատակով Ընկերության կողմից իրականացված բոլոր քայլերը կատարվել են ողջամիտ ժամկետներում: Ընկերությունը կրկին առաջարկել է Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնասիրության արդյունքում գործող կանոններում կատարել համապատասխան փոփոխություններ,

10) Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ԷՄԱ կանոնների 37-րդ և 68-րդ կետերի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 8-ի №ՄՄ/34.3-Մ2-23/3009-2026 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, նույն հոդվածին համապատասխան, անհրաժեշտ է գրությունն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերության պարզաբանումը,

11) Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2026 թվականի հունիսի 15-ի №01-06/15 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել իր պարզաբանումները, նշելով որ նմանատիպ գործելակերպի շնորհիվ իրենց հաջողվել է նվազեցնել Ընկերության ֆինանսական ռիսկերը և որ պայմանագրերում նախատեսված մինչև մեկամսյա ժամկետը ինքնանպատակ

սահմանափակում կամ կամայական մոտեցում չէ, այլ պայմանավորված է բացառապես հնարավոր ֆինանսական և գործառնական ռիսկերի կառավարման անհրաժեշտությամբ՝ միաժամանակ հնարավորություն տալով բարեխիղճ սպառողների դեպքում գործընթացն իրականացնել էապես ավելի կարճ ժամկետներում: Հետևաբար, սպառողների հետ պայմանագրեր կնքելիս, առաջնորդվելով ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 1-ին ենթակետով, փոխադարձ համաձայնությամբ փորձել են ապահովել կողմերի շահերի հավասարակշռված պաշտպանությունը,

12) Հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 29-ի №199-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի «բ» պարբերությամբ վերանայվել են ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված ժամկետները, մասնավորապես՝ սահմանվել է, որ մատակարարման պայմանագիրը լուծվում է սպառողի նախաձեռնության դեպքում՝ լուծումից ոչ ուշ, քան 30 օր առաջ տեղեկացնելով մատակարարին, և մատակարարի նախաձեռնության դեպքում՝ մատակարարման պայմանագրով կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ այդ մասին ոչ ուշ, քան 30 օր առաջ տեղեկացնելով սպառողին: Հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 29-ի №199-Ն որոշմամբ սահմանված կարգավորումներն ուժի մեջ են մտել 2026 թվականի օգոստոսի 1-ից,

13) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե արարքը, իրավակարգավորման փոփոխությամբ պայմանավորված, դադարել է իրավախախտում համարվելուց,

14) Ընկերության կողմից իր հաշվեկշռման խմբում ներառված սպառողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերով սահմանված՝ պայմանագրի լուծման ժամկետները ԷՄԱ կանոններով սահմանված կարգավորումների՝ վերը նշված փոփոխություններով պայմանավորված համապատասխանում են ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված ժամկետներին, ԷՄԱ կանոնների 37-րդ կետով սահմանված կարգավորումներին, ինչով պայմանավորված, առկա է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ վարչական վարույթի կարճման հիմքը,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերության նկատմամբ 2026 թվականի հունիսի 8-ից հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
---- -------ի 2026թ.